

ՂԱԼԵՄ ԶԱՇԱԾ, մ. հ., գրչով գծուած, գծագրութեամբ զարդարուած:

ՂԱՏԸՆԱԼ, սխալի մէջ իյնալ: Ա. ք. խալտենալ (տես ճանկիկեան):

ՂԱՅՐ, տես ԽԱՅՐ:

ՂԱՄ, ա. տխրութիւն, վիշտ:

ՂԱՄԱԶ, տես ԽԱՄԱԶ, ԽԱՄՉՈՂ:

ՂԱՍՏԻ, ա. քաստ, վճռականութիւն, դիտաւորութիւն. քաստէն, դիտմամբ, վճռականօրէն:

ՂԱՎԼ, ՂԱԲԼ, ա. քավ, համաձայնութիւն, դաշինք, հաւանութիւն:

ՂԱՏԸԲԱԾ, մ. հ. մոմեր դատուած, սեւ թաւիշով (խատիֆէով) պատած մոմեր (?):

ՂԱՏԻՐ ԳԻՇԵՐ, թ. քատըր կեճեսի, ճակատագրի գիշերը. տարուան այն մեծահանդէս գիշերը ուր Թուրքաց Սուլթանը նոր հարճ մը կ'ընտեր իր հարեմին համար Պետութեան ամեն կողմերէն ղրկուած գեղանի կոյսերէն:

ՂԵԼԵՄ, տես ՂԱԼԱՄ:

ՂԶԼՊԱԾ, թ. կարմրագլուխ. հաբեղնին կապեցին ղզլպաշ, կարմիր փաթթոց դրին ?

ՂԻՄԱՃԻԶ, մ. հ., խամաճիկ:

ՂՈՒՄԱԾ, տես ԳՈՒՄԱԾ:

ՂՈՒՄԱՅ, ա. դուսէթ, վիշտ, տխրութիւն:

ՂՈՒՏԻ, թ. քութի, տուփ:

ՂՐԱՅ, պ. դրի, ողբ, հեծեճանք: Ինճ դժուար ու դրայ կու գայ, ինճի համար դժուար է ու ցաւառիթ:

Ճ .

ՃԱՅԻԼ. ՃԱՅԻԼՈՒԿ, ա. անփորճ, տգետ, դեռատի:

ՃԱՌԱԳԵԼ, մ. հ. ճառագայթել:

ՃԱՏՈՒ, ա. ճատու, ջատուկ, տգեղ պառաւ վիուկ:

ՃԵՂ, Ա. ք., ճիւղ:

ՃԵՐԿԱ, պ. ճերկէ կամ ջերկէ, որսորդներ որ ձի հեծած որսի կ'ելլեն. պառական, որսի շուներու խումբ: Մարդիկ կայ ի յայս ճերկաս:

ՃԵՅԵԼ, տես ՃԱՅԻԼ:

ՃԵՊ, ա. գրպան:

ՃԸԿԸՐՑՆԵԼ, մ. հ., ցաւցնել, խոցել:

ՃԻԿԵՐ, ՃԻԿԱՐ, պ. թոք:

ՃԻՅԱՆ, պ. աշխարհ:

ՃԻՃՈՒԻ, մ. հ., ճճիներու:

ՃԻՊՊԵ, ՃԻԴՊՊԵ, ա. ճիւլպէ, կարճ մուշտակ, առանց թելի զգեստ, զոր վերարկուին տակէն կը հագնին: